

ԶԵԿՈՒՑՈՒՄ ՄՈՒՇ ՈՒՂԱՐԿՈՒԱԾ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ.

ՆՈՐԻՆ ՎԵՀԷՓԼՈՌՈՒԹԵԱՆ

S. S. ԳԷՈՐԳ. Ե. ՍԵՐԱԳՆԱԳՈՅՆ ԿԱՅՈՒՂԻԿՈՍԻՆ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈԿ

ՄՈՂ ուղարկուած Եանձնաժողովից

Ամենախոնարհ զեկուցում:

Կոտորածներէ, աւերի տարեգրութիւններով հայ ժողովրդի պատմութիւնը քսաներորդ դարի համաերոպական պատերազմում բնաջնջման սահմակեցուցիչ դէպքով աչքի ընկաւ: Հսկայ ժողովուրդների անօրինակ բաղիւման արնոտ անցքերի ցաւոտ ժամին բնականաբար մանր ժողովուրդները ոտնակոխ եղան, ի թիւս որոնց և հայ ժողովուրդը, որը իւր անօրինակ մարտիրոսագրութեան երկրորդ տարում մնացորդ-բեկորների, հիւծուած, ցան ու ցրիւ գաղթականների վերածուեց:

Գոյութեան կռուի սաստիկ լարման ժամին յուսահատութիւնը հեռու մնաց հայ ժողովրդից: Վերածնութեան-վերաշինութեան մեծ նպատակի իրագործման համար բեկոր մնացորդների հաւաքում-պահպանումը ամենակարեւոր աշխատանքը նկատուեց: Եւ այս շինարար աշխատանքում հայ ժողովրդի դարաւոր մայր Ե. Էջմիածինը ինչպէս առաջնորդում, այնպէս և այժմ ամենից առաջ և ամենից մեծ չափով գործի ձեռնարկեց:

Ձերդ Վեհափառութեան բաղամօրինակ ու ծանր աշխատանքների մէջ առանձին հոգացողութեան առարկայ եղաւ հայրենի երկրի սրբազան աւանդների հնութիւնների, բեկորների հաւաքում, պահպանումը: Առաջին անգամը չէ, որ Ձերդ Ս. Օծութեան բարձր հրամանով արշաւախմբեր են ուղարկուած աւերակ երկրի ժողովրդին օգնութիւն հասցնելու և մեր խնկիլի նախնիքներից մնացած սրբազան աւանդ մնացորդները ժողովելու, կորուստից ազատելու և Մայր Աթոռ հասցնելու ի պահպանութիւն:

Այս անգամ էլ Մշի գրաւումից յետոյ Ձերդ Ե. Օծութեան ուղարկութեան առարկայ դարձաւ պատմական յիշատակարաններով հարուստ Տարօնի ժողովրդին անմիջական օգնութիւն հասցնելու և վանքերի, եկեղեցիների հնութիւնները, ձեռագրերը ժողովելու գործը:

Ձերդ Վեհափառութեան բարձր հրամանով այս աշխատանքը յանձնուեց Յանձնաժողովիս անդամներին, որոնք իրենց ուսանյալդ յանձնարարութիւնը կատարելուց յետոյ պարտք են համարում իրենց կատարած գործի սոյն համառօտ, ամենախոնարհ զեկուցումը ներկայացնելու Ձերդ Վեհափառութեան:

Ա. Յանձնաժողովի ճանապարհորդութիւնը Մուշ եւ վերադարձը.

Յանձնաժողովը Հայրապետական Դիւանից ստացաւ հետեւեալ գրութիւնը.

Մայր Աթոռի միաբան շնորհունակ Իսահակ սարկաւազ Տէր Ղազարեանին, մեծարգոյ պ. պ. Օգնականին Տեսչի Մայր Աթոռի Ճեմարանի Աւետիք Տէր-Պօղոսեանին եւ Ճեմարանի ուսուցիչ Բահաթուր Բահաթրեանին.

Ազգիս Վեհափառ Հայրապետն ի նկատի ունենալով ինչ ինչ անյետաձգելի հանգամանքներ, բարեհաճեց կարգադրել, որ կազմակերպելով մի խումբ ուղևորութիւն Մուշ եւ նրա շրջակայքը, այնտեղ եղած վանքերի եւ եկեղեցիների մնացած գոյքերին ու ստացուածներին հսկելու եւ տէրութիւն անելու:

Հայրապետական Դիւանս յայտնելով Ձեզ նորին Վեհափառութեան հրամանը, յանձնարարում է ի նկատի ունենալ հետեւեալ հանգամանքները եւ միահամուռ գործակցութեամբ եւ խորհրդով աջակցելով միմեանց, ջանաք Ձեզ յանձնարարուած գործը յաջողութեամբ գլուխ բերել:

Ա. Մուշի եւ նրա շրջակայքի ժողովրդեան գաղթի ժամանակ թողուած վանքերի եւ եկեղեցիների գոյքն ու զարդերը, եկեղեցական անօթները, պահուած են թաքստոցներում, որոնց տեղերը գիտեն մի քանի անձինք: Դոցանից մէկը, Մշոյ վանքի նախկին սպասաւոր Յակովբ Ստեփանեան, կուղեկցէ Ձեզ, ցոյց կտայ այն տեղերը, որտեղ պահուած են Մշոյ վանքի եկեղեցական սպասները, զարդերը, անօթները եւ այլն: Ձեզ վրայ պարտ է դրում, աշաւուրջ հսկողութիւն ունենալ, որ այդ թաքստոցները բացուին անպատճառ Ձեր ներկայութեամբ եւ առանց Ձեզ ոչ մի թաքստոց չբացուի: Ի յայտ եկած իրերի մասին կազմել տեղն ու տեղը արձանագրութիւն երեքիդ ստորագրութեամբ, ինչպէս նաեւ թաքստարանի տեղը ցոյց տուող անձի ստորագրութեամբ:

Բ. Բացի այդ անձից՝ Յակովբ Ստեփանեանից, կուղեկցեն Ձեզ նաեւ Մուշի ս. Յարութիւն եկեղեցու ծխատէր Տ. Եղիշէ քա-

հանայ Տէր Բարսամեան, նախկին քաղաքային ժողովի անդամ Միսաք Բղէեան և Մշոյ Զորոյ ս. Աստուածածին եկեղեցու աթոռակալ Արամ Գոթիկեան, որոնք գիտեն Մշի եկեղեցիների, հնութիւնների և թեմական զանձների պահուած վայրերը: Եւ եթէ կգտնուին և այլ անձինք, որոնք գիտեն թաքստոցի տեղեր, նոցա ցոյց տուած տեղերն ևս բանալ և արձանագրութեամբ հաւաստիացնել երևան հանուած իրերը և մանրամասն նշանակել, թէ զի եկեղեցուն կամ վանքին է պատկանում:

Գ. Մասնաւոր անհատների սեփականութիւն եղած կամ եղող թաքստոցների վերաբերութեամբ ձեռնպահ մնալ, ապագայ թիւրիմացութիւնից խուսափելու համար:

Դ. Մասնաւոր անձանց մօտ եղած եկեղեցական անօթներ, սրբութիւններ, զգեստներ, եկեղեցիներին կամ վանքերին վերաբերեալ ամեն տեսակի և պիտոյքի իրերն ու սեփականութիւնը յետ ստանալ և այդ նպատակի համար, եթէ պէտք զգացուի, մինչև իսկ դիմել տեղական իշխանութեան և նորանից օգնութիւն և օժանդակութիւն խնդրել, որպէս զի եկեղեցապատկան իրերը կորստի չմատնուին:

Ե. Վանքերին և եկեղեցիներին պատկանող ձեռագրերի վրայ ունենալ առանձին հոգածութիւն և ըստ կարելւոյն բոլորը ժողովել: Այս բոլոր իրերը ժողովել, պահպանել շնորհունակ Իսահակ սարկաւազի և ձեր հսկողութեամբ, արկղների կամ պարկերի մէջ դասաւորել և ապահով եղանակով տեղափոխել Մայր Աթոռ:

Զ. Ի մօտոյ ծանօթանալ եկեղեցիների, վանքերի արդի վիճակին, կազմել մի ցուցակ դեռ ևս չէն ու կանգուն մնացածների, աւերեալների և կիսաւերների մասին, հնար եղածին չափ ճշտել նոցա ստացուածների տեղը, չափը, վիճակն արդեան, եթէ որ և է կալուածագիր կամ արտօնագիր ունին ստանալ և բերել Զեզ հետ Մայր Աթոռ:

Է. Ծանօթանալ ժողովրդի այժմեան վիճակի, դրութեան, քանակի, ռւր լինելու և այլ նման խնդիրների հետ և աշխատել ճշգրիտ թուական տուեալներ ունենալ այդ ամենի մասին, որոնց մանրամասնութիւնները տեղական պայմանների մէջ կորոշուին:

Ը. Աշխատել, հնար եղածին չափ, աւերից ու կողոպուտից ազատուած ազգագրական, հնագիտական, արուեստի և այլ մնացորդները ժողովել և նոյնպէս հասցնել Մայր Աթոռ:

Թ. Տեղեկան թշուառ հայութեան մնացորդներին ցոյց տալ եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի միջոցներից հոգածութիւն և խնամարկութիւն, որքան ժամանակ այնտեղ կը լինիք:

Այս բոլորի մասին, վերադառնալուց յետոյ, մանրամասն զեկուցագրով կտեղեկագրէք Նորին ս. Օծութեան:

Կարևոր ծախքերի համար էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովը կհոգայ, որին և գրում է միաժամանակ:
ԳԻՆԱՄԱԿԵՑ՝ Տիրայր ծ. վարդապետ.

Ս. էջմիածնի Եղբ. Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովից ևս ստացուեցան վկայականներ, այն մտքով, որ Յանձնաժողովը գնում է Մուշ և շրջակայքը ա. Մշի զօրքին բաժանելու զատկական նուէրներ և բ. պատերազմից փաստաւորներին օգնելու:

Յանձնաժողովը, ի նկատի ունենալով տեղի գաղթական ժողովրդին անմիջական օգնութիւն հասցնելու անհրաժեշտութիւնը, իրաւունք ստացաւ և իր հետ առաւ Եղբայր. Օգն. բժշկական Թոուցիկ խմբի Թալինի բժիշկ պ. Խոսրով Փանոսեանին և դեղօրայր:

Այսպիսով Յանձնաժողովի կազմն էր.

1. Իսահակ սարկաւազ Տէր Ղազարեան—միաբան Մայր Աթոռի.
2. Աւետիք Տէր Պօղոսեան—Գէորգեան ձեմարանի տեսչի օգնական.
3. Բահաթուր Բահաթրեան—Գէորգեան ձեմարանի ուսուցիչ.
4. Բժիշկ Խոսրով Փանոսեան—Եղբ. Օգնութեան բժիշկ.
5. Եղիշէ քահանայ Տէր Բարսամեան—Մշի ս. Յարութիւն եկեղեցու միաբան.
6. Միսաք Բղէեան—Մշի նախկին քաղաքական ժողովի անդամ
7. Արամ Ֆոթիկեան—Մշի Զորոյ ս. Աստուածածին եկեղեցու աթոռակալ.
8. Յակովբ Ստեփանեան—Մշի ս. Կարապետի նախկին սպասաւոր:

Հրահանգներն ստանալուց յետոյ Յանձնաժողովը անմիջապէս ձեռնարկեց գործի: Տարօնի գաղթական ժողովրդին եղբայրական և բժշկական օգնութիւն հասցնելու և Մուշ քաղաքի ռուս զինուորներին զատկական նուէրներ տալու համար Զերդ ս. Օծութեան բարձր հրամանով ս. էջմիածնի Եղբ. Օգն. Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովի գանձարկղից Յանձնաժողովիս տրամադրութեան տակ գրուեց քսան հազար ռուբլի (20,000 ռ.):

Այս գումարից Յանձնաժողովը նախնական ծախքերը և ճանապարհածախքը հոգալու համար վերցրեց 6,000 ռ. մնացորդ 14,000 ռ. Երևանի Պետական բանկի բաժանմունքի միջոցով փոխադրեց իր գնալիք վայրի գործող բանակի գաշտային գանձարանը, տեղ հասնելուց յետոյ այնտեղ ստանալու և գործադրելու:

Նորանոր գնումներից և ծախսերից խուսափելու համար Յանձնաժողովը առանձին պահանջագիր մատեանով ստացաւ ս. էջմիածնի Եղբ. Օգն. պահեստներից իրեն հարկաւոր մթերքները: Յանձնաժողովը վերցրեց՝ շաքար, թէյ, սուրճ, սապոն, մախորկա,

Թուղթ մախօրկայի համար, թաշկինակներ մեծ ու փոքր, երես-
սրբիչներ և այլ մանր իրեր *) Երևանից գնեց կօնհակ հիւանդների
համար, տաք զգեստներ յանձնաժողովի անդամների համար:

Նախապատրաստութեան ժամանակ ամենից ղժուարը մթերք-
ները Մուշ հասցնելու տեղափոխութեան միջոցներ ճարելու
հարցն էր:

Մինչև մարտի 29-ը հազիւ հնարաւոր եղաւ անհրաժեշտ
պատրաստութիւնը տեսնել: Մարտի 29-ին Յանձնաժողովը բախտ
ունեցաւ Չերդ Վեհափառութեան Հայրապետական օրհնութիւնն
ստանալու: Մարտի 30-ին մասնաւոր ֆուրգօններ վարձելով
մթերքները փոխադրեցին Իգդիր. նոյն օրը Յանձնաժողովը մեկ-
նեց ս. էջմիածնից:

Իգդիրում հազիւ կարողացաւ Յանձնաժողովը գնել մէկ
ֆուրգօն—երեք ձիով, 4 հատ օսետինի մի ձիանի սայլակ. Յանձ-
նաժողովն ունէր նաև մի լինէյկա—երկու ձի լծած չորս հոգու
համար և 4 ձի, մնացած չորս անդամների հեծնելու համար:

Իգդիրում բեռը կշռելուց յետոյ պարզուեց, որ մօտ 150 փ.
ապրանք կայ, որը մեր ունեցած միջոցներով անկարելի էր տե-
ղափոխել Մուշ, ուստի ստիպուած եղաւ վարձել մասնաւոր 2
ֆուրգօն ևս մինչև Արծափ. հեռուն գնացող ֆուրգօններ չկային:

Ապրիլի 2-ին Յանձնաժողովը բեռնակիր խմբի հետ մեկնեց
Իգդիրից և հազիւ կարողացաւ նոյն ամսի 17-ին հասնել Խնուս:

Յանձնաժողովը ճանապարհին մեծ ղժուարութիւնների հան-
դիպեց և կրեց սպասածից աւելի նեղութիւններ:

Ամենից առաջ ճանապարհը վատ էր. խճուղի չէր, այլ հող-
յաճախ գարնանային յորդ անձրևներ էին տեղում, ուստի ֆուր-
գոնները, սայլակները խրուումէին ցեխում և մեծ ղժուարութեամբ,
երկար ժամանակ չարշարուելուց յետոյ միայն հնարաւոր էր լի-
նում հանել ցեխից. երբեմն շրջում էին կամ կենդանիներն էին
յոգնում, հիւանդանում: Դժուարութեամբ էր ճարում անասուն-
ների կերը. աւելացնենք և այն, որ մեր սայլապանները անփորձ,
իրենց գործը չիմացող մարդիկ էին, ղժուարանում էին սայլերը
կառավարել, ձիերին հարկաւոր խնամքը չէին տանում. փորձուած
սայլապաններ գտնելն էլ անկարելի եղաւ:

Յանձնաժողովի անդամներից ոմանք յաճախ ստիպուած էին
լինում սայլապանների գործը կատարել, և կիսատ-պոատները,
կոտրածները, փչացածները մի կերպ լրացնել:

*) Ստացուած իրերի պահանջագիր մատեանը Յանձնաժողովս իր
վերջին հաշուի եւ ապացուցաթղթերի հետ ներկայացրեց Նղբ. Օգն. Գլխա-
ւոր կարգադիր Յանձնաժողովին յունիսի 6-ին:

Վերոյիշեալ բոլոր հանգամանքները պատճառ հղան յանձնաժողովի ծանր առաջ շարժուելուն, թէև համեմատութեամբ միւս գործող մարմինների բեռնակիրների՝ Յանձնաժողովի բեռնակիր խումբը աւելի արագ և քիչ ֆնասներով տեղ հասաւ:

Տեղափոխութեան միջոցների պակասութեան պատճառով Յանձնաժողովը երկու անգամ ղինուորական իշխանութեան փոխադրութեան միջոցներից օգտուեց:

Շնորհիւ այսպէս դանդաղ առաջ շարժուելուն Յանձնաժողովը ստիպուած էր բեռնակիր խմբի հետ յաճախ դուրսը գիշերել. բացօդեայ մնալ, անձրևի, խոնաւութեան, ցրտի և այլ անյարմարութիւնների ենթակայ լինել:

Հասնելով . . . տեղը յանձնաժողովը շտաբից ստացաւ պատշաճ վկայականներ, այն մտքով, որ ղինուորական իշխանութիւնները կատարեալ աջակցութիւն ցոյց տան յանձնաժողովին իւր առաքելութիւնը կատարելու:

Ապրիլի 24-ին Մուշ հասաւ և տեղաւորուելուց, պատշաճ իշխանութիւններին ներկայանալուց յետոյ իւր անմիջական պարտականութիւնները կատարելու գործին ձեռնարկեց:

Ամենից առաջ պտտեց թաքստոցի տեղերը և կազմեց պատշաճ արձանագրութիւններ՝ ըստ այսմ. *) (արձանագրութիւն Ա.)

Ա. ս. Մարինէի քաղ. Առաջնորդարան հայոց. այժմ ամբողջ շէնքը, յարակից շէնքերով և տներով աւերուած գետնին է հաւասարուած: Գաղտնարանը եղել է վարի յարկի սենեակներից մէկի տակը. ըստ ասութեան տեղացի կենդանի մնացած ոմանց Հաջի Համիդ Բայրախտար զադէն այստեղից մի քանի պարկ իրեր է տարել առաջնորդարանը այրելուց և քանդելուց առաջ: (արձ. Բ.)

Բ. ս. Մարինէի քաղ.— Զոյրիկեան Գասպար աղայի տուն. սրան յանձնուած են եղել Առաքելոց վանքի ոսկէ և արծաթէ աւանդների կտորներ, չաթալ թագեր (2 հատ) քշոցներ (5 հատ) երկու բուրվառ, 125 շուրջառի կտոր, Ղլիճ Աւետարանի կողեր և մի քանի խաչ: Շէնքը կանգուն է. բայց կան փորուածքներ բնակարանի սրահի ձախ անկիւնում, որը ծածկուած էր սալով և թարմ ցեխով: Սրահի աջ կողմում գտնուող սենեակներում 4 տեղ անկիւններում փորուածներ կան. գոմում կան երկու փորուածք մէկը բոլորովին թարմ. մարագում կան երկու հին փորուածք:

*) Այս թագստոցների, ս. Կարապետի եւ միւս եկեղեցիների ու վանքերի արդի դրութեան մասին Յանձնաժողովը կազմել է մանրամասն արձանագրութիւններ իւր արձանագրութեանց յատուկ մատեանում. (տեսնել արձանագրութիւններ Ա — ԺԴ, 1 — 25).

քանդուած է նոյնպէս մառանի թէ յատակը և թէ մի անկիւնը:

Յիշեալ մարդու բնակարանում ապրող Դշխունի անունով կինը պատմեց, որ Հաջի Համիդ և Հաջի Ալոնց Մուստաֆէն և Մաջախենց Մուստաֆէն խաչ Մանուկ Մարդէյեանի ցուցումներով և մասնութեամբ հանել են թագստոցներում պահուածները, ինչպէս և դրամները: (արձանգր. Գ.)

Գ. Ե. Մաքիմեի քաղ—Արշակ Մահտեսի Իգիթեանի տունը: Սա եղել է տնտեսական խորհրդի գանձապահ: Տան վերին յարկը քանդուած է. ներքինը կանգուն. ներս մտնելու ոչ մի հնարաւորութիւն չկար, որովհետեւ խորը ցեխով և ամեն տեսակ աղտեղութիւններով լի էր: Ըստ ասութեան սրա ղեռատի աղջկանը թուրք Դաբա Մահմուդ և Մուստաֆա տարել են, վրան բռնութիւն գործ դրել, աղջիկը դարանի տեղն իմաց է տուել, և թագստոցը հանել, տարել են: (արձանագր. Դ.)

Դ. Չորոյ քաղ. Միսաք Բգէկեանի տունը—ամբողջ շէնքը խորտակուած է. ներքին յարկում եղել է մեծ գաղտնարան. անձնական կահ կարասիների հետ եղել են Գահիրէի Հ. Բ. Ընկ. Միութեան դրամներից և արխիւը: Ամբողջ գաղտնարանը հնուց բացուած և հանուած է: (արձանգր. Ե.)

Ե. Չորոյ քաղ. Նահապետ Մահտեսի Յակովբեանի տունը. Այստեղ թաղուած են ս. Աստուածածին եկեղեցու գոյքը, բացի սրբազան անօթներից. տունն այժմ աւերակ է և հնուց խորը փորուած: (արձանգր. Զ.)

Զ. Չորոյ քաղ. Կարապետ էֆ. Թիւթիւնճեանի տուն—Այստեղ են պահուած եղել ս. Աստուածածին եկեղեցու անօթներն ու հնչակեանների դրամներից: Տան յատակը փորվորուած է, դարանը բացուած. բոլոր պարագաները ցոյց են տալիս, որ գիտցող մէկն է հանել. մուտքի դիմացի սենեակի դարանն ևս բացուած է: (արձ. Է.)

Է. Բեթի քաղ. Նազարէթ էֆ. Քէշիշեանի տունը. Սա եղել է Գահիրէի Հ. Բ. Ընկ. Միութեան ատենապետը: Միութեան դրամներից 400 լիւրա է եղել մօտը: Տունը կանգուն է: Չմեռը թիւրք կառավարութիւնը գրաւել է և բնակութիւն հաստատել: Ըստ ասութեան թիւրք պարլամէնտի անդամ Հաջի Իլիասը Քէշիշեանի ամբողջ զրամական կարողութիւն ստացել է նրա կնոջից, կեանքը փրկելու պայմանով: Այս ընտանիքից ոչ ոք կենդանի չէ: (արձ. Ը.)

Այնուհետեւ Յանձնաժողովը պատեց քաղաքի 5 եկեղեցիները, երկու մատուռը, մանրամասն ծանօթացաւ ներկայ վիճակի հետ և կազմեց արձանագրութիւն (Թ.)

Քաղաքի և շրջակայքի գաղթականութեան քանակի և վիճակի հետ ծանօթանալուց յետոյ, խորհրդակցութիւն ունեցաւ տեղում գործող Հ. Կենդ. Կօմիտէի լիազօրի հետ, ցոյց տուեց հար-

կաւոր օժանդակութիւնը և շտապեց դէպի ս. Կարապետ *):

Մայիսի 3-ին մեկնեց և նոյն օրը երեկոյեան հասաւ վանքը, իր հետ ունենալով նաև երեք զինուած մարդ, հայ կամաւորներէն ից:

Ս. Կարապետի նախկին սպասաւոր Յակովբ Ստեփանեանը նոյն երեկոյեան դիտեց վանքի գաղտնարանները և յայտնեց, որ ֆնացել է անփնաս ամենամեծ և ամենակարևոր գաղտնարանը, միւսները քանդուել, բացուել են:

Մայիսի 4-ին յանձնաժողովի անդամներէ, ուղեկից 3 զինուած մարդկանց ներկայութեամբ բացուեց գաղտնարանը. որը տեղեց առաւօտեան ժամը 9-ից մինչև 1-ը: Հանուած իրերը առանձին հսկողութեամբ պահուեցին յանձնաժողովի կեցած խցում, իսկոյն կազմուեց արձանագրութիւն և ցուցակագրուեց բոլորն առանց բացառութեան: (Արձանագրութիւնը և ցուցակը տեսնել ս. Կարապետի գոյից մատեանում. պատճէնը յանձնաժողովի արձանագրութիւնները մատեանում. արձանագրութիւն ժԱ.):

Հանուած իրերի մէջ կար մի փոքրիկ փայտէ սնդուկ, որը պատկանում էր վանքի նախկին սպասաւոր Յակովբ Ստեփանեանին, որի մասին սնդուկի տէրը Հայրապետական Դիւանին տուած իր գրաւոր ցուցմունքի մէջ յիշատակել էր: Այդ սնդուկը բացուեց. մէջը գտնուեց մի թուղթ նոյն անձնաւորութեան գրածը, ուր մի առ մի յիշուած էին սնդուկի մէջ եղածները: Կազմուեց արձանագրութիւն նոյն թղթի վրայ, տուեց ստացական և սնդուկը յանձնուեց տիրոջը **):

Վանքի ներկայ վիճակի հետ ևս մանրամասն ծանօթանալուց և արձանագրութիւն (ԺԲ.) կազմելուց յետոյ, Յանձնաժողովը իրերը ապահով տեղափոխեց զինուած մարդկանց, յանձնաժողովի մի անդամի և Յակովբ Ստեփանեանի հսկողութեամբ Խնուս, իսկ ֆնացած անդամները վերադարձան Մուշ մայիսի 7-ին ֆնացած վանքերը շրջագայելու:

Մշում բաժանեց զինուորականներին հասանելիք նուէրները, կազմեց խորհրդակցութիւն ժողովրդի սննդի գործը կանոնաւորելու հարցի համար, հաւաքեց եղած ստոյգ վիճակագրութիւնը գաղթականների և ապա գնաց Առաքելոց, Աշտիշատի և Մատնա-

*) Մշի թաքստոցները նայելուց, եկեղեցիների վիճակը դիտելուց յետոյ ուղեկից մշեցիները, բացի Յակովբ Ստեփանեանից, ազատ էին եւ այլ եւս չէին մասնակցում յանձնաժողովի գործերին:

**) Ստացականը, արձանագրութիւնը եւ սնդուկի տիրոջ գրութիւնը միեւնոյն թղթի վրայ են եւ փակցուած է արձանագրութեան մատեանում ժԱ. արձանագրութեանը:

վանի վանքերը, կազմեց արձանագրութիւններ (ԺԶ. և ԺԴ.)՝ վանքերի արդի վիճակի մասին: Հնարաւոր չեղաւ զնալ ս. Յովհաննու վանքը, որովհետեւ յանձնաժողովի այնտեղ եղած ժամանակ, զօրքի դիրքերը վանքին մօտ էին գտնուում և զօրքի հրամանատարը հնարաւոր չէր հաժարում մեր այնտեղ գնալը:

Յանձնաժողովը Մշից մեկնելուց առաջ հետեւեալ որոշումն արաւ. ի նկատի ունենալով վանքերի և եկեղեցիների ներկայանխնամ դրութիւնը և այն, որ հսկողութեան բացակայութեան պատճառով եղածն էլ աւելի է փչանում, որ դեռ ժողովրդի զանազան անհատների մօտ պատահում են ձեռագրեր, եկեղեցական սպասներ այս ու այն տեղից հանուած կամ ձեռք բերուած, նաև, որ ժողովրդին եղբայրական օգնութիւն հասցնելու համար հարկաւոր են լիազօրներ, իր կողմից թողեց պ. պ. Հմայեակ Մակարեանին, (որը գործում էր Հայկ. կենդ. կօմիտէի Մշի ճիւղում) և Յակովբ Ստեփանեանին, իբրև եղբայրական Օգնութեան ներկայացուցիչների, որոնց պարտաւորեցրեց նաև աշալուրջ հսկողութիւն ունենալ վանքերի, եկեղեցիների, ազգային հնութիւնների վրայ ցնոր բարձր տնօրէնութիւն Ջերդ ս. Օծութեան:

Երկու լիազօրների հաժար գործող բանակի շտաբից հանեց պատշաճ վկայականներ:

Գործն այս ձևով կանոնաւորելուց յետոյ Յանձնաժողովը մայիսի 14-ին մեկնեց Մշից Սարիղամիշի ճանապարհով վերագարձաւ Մայր Աթոռ մայիսի 27-ին:

Մայիսի 30-ին առանձին յայտարարութեամբ բերած իրերը ներկայացրեց Ջերդ Վեհափառութեան բարձր տնօրէնութեան և արժանացաւ Հայրապետական օրհնութեան:*)

Բ.—Յանձնաժողովի ցոյց տուած եղբայրական և բժշկական օգնութիւնը, զինուորների բաժանած նուէրը, և գաղթականների վիճակագրութիւնը:

1. Յանձնաժողովը գաղթականներին եղբայրական և բժշկական օգնութիւն ցոյց տալու հարցում իրեն գործելակերպ ընտրեց ոչ անշատ գործունէութիւնը, այլ տեղում եղող, գաղթականներին օգնող, միւս մարմինների հետ համերաշխ գործակցութիւնը, քանի որ անշատ գործունէութեան շնորհիւ մարմինները յաճախ մի-

*) Ֆուրգօնը տեղ հասաւ յունիսի 5-ին եւ բերեց իր հետ մնացած 3 մեշոկ իրերը:

մեանց գործունէութեան անտեղեակ են մնում և միևնույն գաղթականներին են օգնում կամ հոգում են միատեսակ կարիքները, միւսները մնում են առանց ուշադրութեան:

Այս էր պատճառը, որ Յանձնաժողովը իւր թէ նիւթերով, թէ դրամով հասցրած օգնութիւնը առաւելապէս տեղում գործող միւս մարմինների տրամադրութեան տակ է դրել, որոնք աւելի մօտ ծանօթ էին գաղթականութեան կարիքներին, մանաւանդ որ Յանձնաժողովը հնարաւորութիւն չունէր միևնույն տեղում երկար կանգ առնելու:

Յանձնաժողովը իր հետ տարած մթերքները բաժանել է ըստ այսմ, ստանալով պատշաճ ստացագրեր.

1. Արծափի Եղբ. Օգնութեան ներկայացուցչին տուել է ի պահ ա.—5 արկղ դեղօրայք. բ.—6 արկղ սապոն. գ.—2 վրան. դ.—մի լուացարան. ե.—մի կոնք. զ.—մի մահճակալ*).

2. Խնուս—Քաղաքների Միութեան և Կենդրոնական Կօմիտէի պահած որբանոցին 120 թաշկինակ. Քաղաք. Միութեան հիւանդանոցին 5 շիշ կօնեակ և 1 փ. շաքար. (շաքարի համար ստական չի ստացուել):

3. Մուշ. Կենդրոնական Կօմիտէի լիազօրին—Սասունցի հիւանդ դիւնուորներին և գաղթականներին բաժանելու ա.—3 փութ 33 գր. շաքար. բ.—38 գր. թէյ. գ.—54 հատ երեսօրբիչ. դ.—144 ձեռքի թաշկինակ. ե.—126 գլխի թաշկինակ. զ.—սապոն 6 փ. է.—սուրճ 3 գր. ը.—կօնեակ 2 շիշ.

4. Մուշ.—Մոսկուայի Հայկ. Կօմիտէի որբանոցին ա.—21 գր. շաքար. բ.—30 գր. մակարօն. գ.— $\frac{1}{2}$ գր. սուրճ.

5. Մուշ.—Քաղաքների Միութեան հիւանդանոցին 5 գր. սուրճ.

6. Յանձնաժողովը Աւրան գիւղում (Մշի դաշտումն է) բաժանել է չքաւորներին 1 փ. շաքար, 60 թաշկինակ, բժշկի կարգադրութեամբ հիւանդներին տրուել է 2 շիշ կօնեակ:

Յանձնաժողովին ուղեկցող բժիշկն ևս աշխատել է հնար եղածին չափ բժշկական օգնութիւն ցոյց տալ, որն արտայայտուել է ըստ այսմ.

1. Մշում Կենդ. Կօմիտէի և Մոսկ. Հայկ. Կօմիտէի որբանոցին է հսկել յանձնաժողովի այնտեղ եղած ժամանակ.

2. Թէ Խնուսում և թէ Մշում ընդունել է երթևեկ հիւանդներին, տուել է դեղօրայք, երբեմն նաև թէյ, շաքար.

*) Յանձնաժողովը հնարաւորութիւն չունէր իր հետ առնելու այս ամենը տեղափոխութեան միջոցներ չունենալու պատճառով:

3. Ճանապարհին անցնող դարձող հիւանդ զինուորներին և գաղթականներին է նայել և դեղեր տուել:

4. Մշում Քաղաք, Միութեան հիւանդանոցին տուել է բաւականաչափ դեղօրայք, որոնց ցուցակը բժշկի մօտ է:

Բժշկի առաջարկութեամբ զանազան տեղերում թոյլերին բաժանուել է՝ շաքար, թէյ, սուրճ, երբեմն նաև կօնեակ:

II. Զօրքին հասնելիք նուէրը բաժանել է և ստացել շնորհակալութեան թղթեր:

Քանի որ Յանձնաժողովի գործունէութեան գլխաւոր կենդրոնը լինելու էր Մուշը և նրա շրջակայքը, ուստի և աշխատեց այս շրջանի հետ աւելի մանրամասն ծանօթանալ: Այս նպատակով Յանձնաժողովը թէ Խնուսում և թէ Մշում խորհրդակցութիւններ ունեցաւ տեղում գործող Հ. Կենդր. Կօմիտէի, Մոսկ. Հ. Կօմիտէի և Քաղաք. Միութեան ներկայացուցիչներին հետ:

ա. Որբերին հաւաքելու, տեղափոխելու գործը յանձն է առնում Մոսկ. Հ. Կօմիտէն:

բ. Բշտակական օգնութեան գործը և սննդատու կայաններ բանալը՝ Քաղաքների Միութիւնը:

գ. Գաղթականների մնացած պէտքերը հոգալու են Եղբ. Օգնութիւնը և Կենդր. Կօմիտէն:

Խորհրդակցութիւնը յատուկ ուշադրութեան առաւ որբերը հաւաքելու խնդիրը: Որբերից շատերը դրուած են այս ու այն մասնաւոր անհատների մօտ, զինուորականներն ևս առել են իրենց մօտ պահելու, բայց նոյն տեղը չմնալու պատճառով երբեմն թողել գնացել են, որբերին այդ դրութիւնից ազատելու համար խորհրդակցութիւնը գրաւոր խնդիր ներկայացրեց զօրաբանակի հրամանատարին:

Մշում յանձնաժողովը խորհրդակցութիւն ունեցաւ տեղում եղող Կենդ. Կօմիտէի լիազօրի հետ գաղթականներին օգնելու հարցի համար: Խորհրդակցութիւնը պարզեց, որ Մշում և Մշի դաշտում տեղաւորուած գաղթականները և կոտորածից ազատուած տեղացիները մի կերպ իրենց պահել են, օգնել է Կենդ. Կօմիտէի ներկայացուցիչը ցօրեն բաժանելով. սակայն մինչև ամառուայ հունձը անկարող են իրենց պահել, ուստի անհրաժեշտ են կենդանիներ գնել, որ հեռու գիւղերում եղած հօրերից ցօրենը փոխադրեն և ապա այդ կենդանիները իբրև լծկան բաժանուէն չքաւորներին կալ անելու, տալով նաև սերմացու, որով նրանք ապագայում տեղահան չեն լինի և չեն ծանրանայ օգնող մարմինների վրայ:

Յանձնաժողովը ընդառաջ գնաց այս որոշման և իր գումարից յատկացրեց առ այժմ 2000 ռ. որպիսի գումարը դրեց Կենդ. Կոմիտէի ներկայացուցչի տրամադրութեան տակ, որ սա ծախսէ և հաշիւը ներկայացնէ Եղբ. Օգնութեանը. ստացուեց նաև ստացական:

III. Գալով ժողովրդի վիճակագրութեան Յանձնաժողովը պարտք է համարում յայտնելու, որ Տարօնը եղել է աւեր Հայաստանի այն բացառիկ դժբախտ գաւառներից, ուր տաճիկ կառավարութիւնը ամենամեծ չափերով և ամենազարհուրելի միջոցներով անդէն ժողովրդին առանց խտրութեան կոտորել, իրօք բնաջրջման է ենթարկել:

Ձերդ Վեհափառութեանը այս անօրինակ կոտորածի մասին ժամանակին ներկայացուել են զեկուցագրեր, ուստի Յանձնաժողովս պարտ է համարում միայն յիշելու, որ անձամբ պատել է կոտորածի մի քանի գլխաւոր վայրերը և ականատես է եղել, թէ ինչպէս ցայսօր էլ զանազան գիւղերում մարազների, գոմերի մէջ, իրար կողքի թափթփուած են կենդանի այրուածների կմախքները, առունների ամբիւրն ընկած են դիակները, ցրուած են այրուածների մոխիրները, եկեղեցիներից, տներից դեռ այրուածների ճեղքների հոտն է գալիս: *)

Ժողովրդի մեծագոյն մասը կոտորուել է: Փոքրաթիւ մասը լեռներն է ապաւինել, բաւական ժամանակ դիմադրել է, ապա քաղցից, ցրտից նեղուած դիմել է փախուստի դէպի ռուսական բանակը: Այս փախուստին էլ շատ շատերը կոտորուել են կամ քրդերից կամ սովից, ցրտից:

Արդարամտութիւնը պահանջում է ասել, որ մի քանի քրդական ցեղապետներ որոշ տեղերում հայերին պահպանել են, առաւելապէս իրենց ծառայեցնելու, իրենց համար աշխատեցնելու համար: Այժմ էլ դեռ այդ պահուածներից ազատուում—փախչում են. պատահում է, որ պաշտպանող քրդերն են բերում մինչև ռուսական զօրքի շիրքերը, թողնում, իրենք հեռանում են:

Այժմ Մշում և շրջակայքում տեղաւորուած են քաղաքի և դաշտի ժողովրդից ազատուածները, Սասունի շրջանից ազատուածները: Սրանց մանրամասն վիճակագրութիւնը կազմել դժուար էր, քանի որ գաղթականութիւնը շարժուն դրութեան մէջ էր. ամեն օր գրեթէ նոր գաղթականներ էին երևում. շատերն էլ դէպի դաշտի գիւղերն էին գնում կամ գիւղից գիւղ տեղափոխուում:

*) Դժբախտաբար Յանձնաժողովը հնարաւորութիւն չունեցաւ լուսանկարելու այդ վայրերը. լուսանկարչական գործիք թէեւ ունէր, բայց յարմար ապակիներ չկարողացաւ գտնել:

Յանձնաժողովը կարողացաւ վստահելի աղբիւրներից քաղել հետեւեալ վիճակագրական տեղեկութիւնները. (առնուած են մինչև մայիսի 15-ը կազմուած ցուցակներից):

Մուշ քաղաքից ազատուել են 26 ընտանիք, 126 անձն. նոր եկել են 26 հոգի. ընդամենը 152 անձն.

Դաշտի գիւղերում տեղաւորուած են ըստ այսմ.

1) Ալվարինձ—114 անձն, 2) Հերկերա—29 անձն, 3) Էրիշտէր—14, 4) Բաղլու—11, 5) Տոմ—25, 6) Կուարս—21, 7) Քոչա—10, 8) Տատսգոմ—6, 9) Ղըզլաղաջ—16, 10) Մառնիկ—50, 11) Փեթաթ—20, 12) Քօլոսիկ—4, 13) Մկրագոմ—37, 14) Բընգըղներ—35, 15) Սոխգոմ—40, 16) Խասգիւղ—192, 17) Հաւատորիկ—138, 18) Աւգուտ—23, 19) Աբաղ—55, 20) Շմլակ—15, 21) Վարդենիս—14, 22) Առինջ—3, 23) Դերջէվանք—10, 24) Օղունք—4. Ընդամենը 894 անձն.

Խոյթի շրջանից եկածներ.

1) Փիճոնիս—125, 2) Բէլէկներ—21, 3) Թաղու—100, 4) Թմկանք—59, 5) Վարդանոց—51, 6) Հաշտամ—52, 7) Շնարան—7, 8) Յուշտամ—42, 9) Շէննխոտ—129, 10) Շնիստ—171, 11) Թաղաւանք—173, 12) Մկեռ—6, 13) Ակրակ—10, 14) Շիւնոց—186, 15) Բոնաշինի Շէնխոտ—8, 16) Թաղվնձոր—43, 17) Հաւարիկ—37, 18) Օղնոց—18, 19) Քղանք—17, 20) Քերվոլ—11, 21) Կոս—5, 22) Գեղոնք—4, 23) Մրցանք—30, 24) Անանուն—22, 25) Կոստա—18, 26) Լորտնձոր—49, 27) Վարդիսալ—11, 28) Խասօֆի—16, 29) Դալրձոր—130, 30) Քաշքշենք—10, 31) Այրներ—35. Գումարն է 1597.

Սասնի հետեւեալ շրջաններից ազատուել, եկել են Մուշ ըստ այսմ.

1. Տաւորիկի շրջանից	331.
2. Փսանաց	» 195.
3. Խիանի	» 74.
4. Խուլփի	» 72.
5. Շատախի	» 431.
6. Գիլէգիւղանի	» 339.

Գումարն է 1742.

Նոր եկել էին 642 հոգի. կային 150-ի չափ որբեր. Խոյթի շրջանից նոր եկած 159.

Ընդհանուր գումարն է ցուցակագրուածների 4884 անձն, այլ, կին և երեխայ. 2ցուցակագրած հաշուում էին մօտ նոյնքան, այնպէս որ ընդհանուր թիւը մօտաւոր հաշուով 8—9 հազարի էր հասնում.

Գ. Տարօնի վանքերի, եկեղեցիների արդի վիճակի համա-
պատ նկարագիրը և ս. Կարապետի թաքստոցից հանած իրերի
ցուցակը:

1. Հայ ժողովրդի այն աննախընթաց բնաջնջման ընթաց-
քում բազմաթիւ փաստերով հաստատուել է, որ տաճիկ կառա-
վարութիւնը հայ մարդու կեանքի դէմ չէ միայն իւր դադանային
բնազդները հրապարակ հանել, այլ նաև այն ամենի, ինչ ու հայի
ձեռքի, մտքի ծնունդ է: Բնաջնջմանը զուգընթացել է հայ երկրի
պատմական յիշատակարանների աւերումը, թալանը, կործանումը:

Այս նոր պատկերը տեսաւ Յաննաթողովը իւր շրջագայու-
թեան ընթացքում ականաւոր վանքերով ճոխ Տարօնում: Պատ-
մական մենաստանները, հոշակաւոր ուխտատեղիները այնպիսի
աւերման են ենթարկուել, որ Զինդիդ-խան—Էլէնկիթեմուրեան աւե-
րածութիւններն իսկ նսեմանում են ներկայի առաջ:

Աւերող ձեռքը անշունչ քարերի հետ վարուել է այնպէս
բարբարոսաբար, կարծես պատմական անմոռնչ կոթողների վրայ
ևս թափել է իւր վրէժի թոյնը: Եկեղեցիները, սրբոց գերեզման-
ները, խաչարձանները քարոքանդ են արել ու կոտորատել: Այս
բարբարոս գործողութեան ազդակներից է եղել նաև վանքերի
թաքստոցները գտնելու ձգտումը, որոնց տեղերը երբեմն չիմա-
նալով*), ամբողջ շէնքը վառողով կամ ուժանակով պայթեցրել են:

Յաննաթողովը պտտել է հետևեալ եկեղեցիներն ու վան-
քերը, կազմել է արձանագրութիւններ արդի վիճակի, որոնցից
քաղում է հետևեալը**):

Ա. Մուշ քաղաքի եկեղեցիներ.

1. Ս. Մարիմէի եկեղեցի. համանուն թաղում. նախագաւթի
տանիքը, հարաւային և արևմտեան պատերը խորտակուած. խաչ-
կալների հետքն անգամ չկայ. սեղանն ևս տեղ տեղ քանդուած է.
հողածածկ տանիքը տեղն է:

Եկեղեցուն կից, հարաւային կողմը գտնուելիս է եղել Հայու-
հեաց ընկերութեան միայարկ օրիորդաց դպրոցը, որն այժմ գրե-
թէ գետնին է հաւասարեցրուած: Արևելեան կողմում գտնուող
աղայոց դպրոցի վերին յարկը մասամբ աւերուած է: Զորի մէջ,
գետի աջ ափին գտնուող ս. Գէորգի անուան մատուռը աւե-
րուած է:

*) Թաքստոցների տեղերն իմացող հայերին մեծ մասամբ աշխատել
են ձեռք ձգել, ենթարկել են սոսկալի տանջանքների եւ այս ձեւով տե-
ղերն իմացել:

**) Մանրամասնութիւնները տեսնել արձանագրութեան մատեանում
(Թ. ԺԲ—ԺԳ. արձանագրութիւններ):

2. Զորոյ թաղի ս. Աստուածածնի եկեղեցի—Եկեղեցին զրկուած է իւր բոլոր արդ ու զարդից և խաչկալներէց. կոտորուած են հարաւային և աջակողմեան սեղանների վէմ քարերը: Եկեղեցու մօտ գտնուող երկյարկ ծխական դպրոցի շէնքը կանգուն է, ինչպէս նաև Միացեալ Ընկերութեան դպրոցինը: Գետի աջ ափին գտնուող ս. Մինասի մատուռը կանգուն է, աւերուած է միայն տանիքը:

3. Վերին թաղի ս. Յարութեան եկեղեցի—Սա ևս միւսներին վիճակակից է, ներքին արդ ու զարդից զրկուած. պատերի վրայ եղած նկարները եղծուած. եկեղեցու ներսում և դրսում գտնուող գերեզմանները փորուած են: Եկեղեցուն կից դպրոցական շէնքը միանգամայն աւերուած:

4. Բրեի թաղի ս. Սարգսի եկեղեցի—Ըստ ամենայնի վիճակակից է միւս եկեղեցիներին. դպրոցական շէնքը՝ հիւսիսային կողմում, միանգամայն աւերուած:

5. Զիգրաեցի թաղի ս. Կիրակոսի եկեղեցի—Համեմատաբար լաւ մնացած եկեղեցին է. ներսը լի է ամեն տեսակ ցնցոտիներով. եղել է թուրք զօրքի պարէնի՝ ղաւուրմայի, բաքմազի և իւղի պահեստատեղի: Դպրոցական երկյարկ շէնքը կանգուն է:

Բ. Ս. Կարապետի վանք.—Ա. ր տ ա ք ու ս տ. Զանգակատան առաջ գտնուող կիսաշրջան սիւնազարդ հրապարակը բոլորովին աւերուած. զանգակատունը ամբողջովին քանդուած, զանգերից երկուսը կոտորատուած. միւսները ընկած են աւերակներում. Մայր տաճարի գրեթէ բոլոր կողմերի վերի մասից երեք կարգ քարեր քանդուած, տաճարի կիսագմբէթի մի մասը քանդուած. այլ և ս. Ստեփաննոսի և գերեզմանատան (ս. Կարապետի գերեզմանի) եկեղեցիների կաթուղիկէները ամբողջովին քանդուած: Ամբողջ են մնացել ս. Աստուածածնի և ս. Գէորգի եկեղեցիները: Ն ե բ ք ու ս տ.—Գաւթի դռները տարուած են, յատակը քանդուած է, հիւսիսային պատը փորուած. երեք սեղաններն էլ խորտակուած են. խաչկալների հետքն անգամ չկայ: Ս. Աստուածածնի եկեղեցու յատակը փորփրուած, սեղանն աւերուած. Վարդ Պատրիկի և Ստեփանէ Արծրունու գերեզմանները փորուած. ս. Աթանազինէի գերեզմանը քանդուած. ողջ է միայն ս. Կարապետի գերեզմանի վրայ կառուցած մարմարէ կաթուղիկէն. Ս. Գէորգ եկեղեցու սեղանը միանգամայն աւերուած, դարանները բացուած:

Վանքի առաջին բակում գտնուող ուխտաւորների սենեակների վերի յարկի սրահի կէսը քանդուած, երկու սենեակ բոլորովին աւերուած. վարի յարկում մի քանի սենեակ քանդուած: Միաբանների սենեակների յատակները քարուքանդ եղած. վարի

յարկի ջրադացը կիսաւեր. կանգուն է միայն փայտանոցը: Հիւսիսային կողմի ուխտաւորների սենեակները կիսաւեր: Դպրոցի վերի և վարի սենեակները աւերուած. ողջ են միայն առաջնորդի սենեակները և փուռը:

Վանքի երկրորդ բակում գտնուող ս. Յարութեան եկեղեցու գաւթը քանդուած. Մամբրէ եպիսկոպոսի շինած դպրոցական շէնքը՝ կանգուն է. հիւսիսային կողմում գտնուող 3 ախոռներն էլ աւերուած են:

Վանքից դուրս գտնուող «Պօպովեան» վարժարանի հիմքը ձգուած է. տեղ տեղ 1—1½ արշին գեանից բարձրացրած. վանքի հարաւային կողմում գտնուող եօթն խոտաճարակաց մատուռը կիսաւեր է: Թէ վերին, թէ ներքին ագարակները կիսաւեր են. ջրադացը—ներքին Ագարակի մօտ՝ կանգուն է:

Գ. Առաքելոց կամ Թարգմանչաց վանք—Թէ գանգակատան, թէ գաւթի և թէ բուն տաճարի գմբէթները խորտակուած են. տաճարի արեւելեան պատը նոյնպէս. տաճարը կիսով չափ լեցուն է քարերով: Տարուած են վանքի արանոս փայտից շինուած գեղեցիկ քանդակուած հռչակաւոր դռները, 2 ճառընտիրները:

Արեւելեան պատի առաջ Թարգմանիչների խաչարձաններն են. մեծ մասը խորտակուած. կանգուն է Դաւիթ Անյաղթի անուան խաչարձանը, բայց կիսից կոտրած:

Վանահօր, միաբանների և ուխտաւորների սենեակները միասնաձայն աւերուած. ամենից շատ ֆլասուել է այս վանքը. վանքի արեւելեան կողմում գտնուող ս. Աստուածածնի եկեղեցու պատերի միջից անցքեր են բացուած, սեղանն էլ խորտակուած է:

Դ. Աւետարանի.—ս. Սահակի անուան եկեղեցի—Գաւթի տանիքը քանդուած. տաճարի սեղանի տակ գմբէթաւոր շէնք. ս. Սահակի և Շուշանի դամբարանը:

Եկեղեցու հիւսիսային կողմում—մի քիչ հեռու Աշտիշատի պատմական տաճարի հինաւուրց աւերակներն են:

Ե. Մատենավանք—Վանքի ամբողջ շէնքը, գանգակատունը կանգուն են. գաւթում եղած սեղանները աւերուած. գաւթի մէջ, ամենկիւններում կան փորուածքներ: Բուն տաճարի երեք սեղաններն էլ աւերուած, աջ ու ձախ կողմերում եղած գերեզմանները փորուած: Վանահօր բնակարանը, ուխտաւորների սենեակները և ձախած շէնքերը կիսաւեր գրութեան մէջ:

Ս. Կարապետի Թաղստոցից հանած սրբազան անօթների սրբոց մասունքների, ձեռագրերի և տպագրած գրքերի մանրամասն ցուցակը սոյն զեկուցման հետ ներկայացնում ենք Ձերդ Վեհափառութեան:

Դ. Յանձնաժողովի ել և մտից համառօտ հաշիւը*).

Յանձնաժողովի գործունէութիւնն սկսուել է մարտի 30-ից և վերջացել յունիսի 5-ին. այսքան ժամանակամիջոցում նրա ել և մտից հաշիւն եղել է.

Մոտsf.

Դ. Կ.

1. Ս. Էջմիածնի Եղբ. Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովի դանձարանից ստացել է	20000	—
2. Յանձնաժողովը իր գնած սայլակները, ձիերը և այլ մանր բաներ վաճառելուց ստացել է	1788	70
Գումարն է	21,788	70

Ելf.

1. Ընծաների, տեղափոխութեան միջոցների ծախք	3297	14
2. Ս. Կարապետի Թաղստոցից հանած իրերը տեղափոխելու ծախք	1112	63
3. Ճանապարհածախք (ուտեստի, տաք հագուստի և այլ մանր ծախքեր) գնալու ժամանակ յանձնաժողովի 4 անդամների, 4 ուղեկիցների և 5 ծառաների, վերադարձին յանձնաժողովի 4 անդամների և 2 ծառայի համար	2287	37
4. Նպատակ Մշի գաղթականներին սերմացուի համար	2000	—
	8697	14

Առ ձեռն դրամով վերադարձրել է 1091 | 56 |

Չեկով, Տ. Դիւանապետի անուանը փոխադրած

Պետական Բանկի Երևանեան բաժանմունքին 12000 | — |

Ընդհանուր գումարն է 21788 70

*) Մանրամասն հաշիւը ել եւ մտից տուեալով եւ ստացաւորով Յանձնաժողովը յունիսի 6-ին ներկայացրել է առանձին յայտարարութեամբ Եղբ. Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովին:

Առձեռն ղրամը և չեկը յանձնուած է Եղբ. Օգնութեան գանձապահ Տ. Վրթանէս վարդապետին, որը մուտք է գրել Եղբ. Օգնութեան մատեանի Դ. մասում 65-րդ յօդուածով:

Յանձնաժողովը վերադարձրել է նաև— 1) Ֆուրգօն մի հատ, 2) ձի—4 հատ, 3) թամբեր—5 հատ, այլ և խամուտներ և զանազան մանր իրեր: Այս իրերից Յանձնաժողովը գնել է Ֆուրգօնը, երեք ձիւն, երկու թամբը, Ֆուրգօնի սլարազանները, որոնց արժէքն է 1300 ո. և 2000 ո. նպաստը, դուրս գալով եղած 8697 ո. 14 կ. ծախքից մնում է զուտ անվերադարձ ծախք՝ 5397 ո. 14 կ.

Այս է Յանձնաժողովի շուրջ երկու ամսուայ ընթացքում կատարած ճանապարհորդութեան և գործունէութեան համառօտ նկարագիրը:

Անշուշտ Յանձնաժողովը աւելին պէտք է անէր, համաձայն Հայրապետական Դիւանից ստացած հրահանգ գրութեան, սակայն պատերազմական դրութիւնից առաջ եկած բացառիկ պայմանները, հաղորդակցութեան միջոցների պակասութիւնը, ճանապարհների անկանոնութիւնը մի կողմից, աւերակ երկրի, բնաւեր ժողովրդի հազար բերան աղաղակող կարիքները միւս կողմից հնարաւորութիւն չէին տալիս հանդիստ և մի ուղղութեամբ աշխատանք կատարելու:

Ս. Կարապետի թաքստոցից հանածները անվտանգ տեղ հասցնելու պարտականութիւնը ստիպեց Յանձնաժողովին վերադառնալ աւելի շուտ, քան նա կցանկար. քանի որ անեկիքներ դեռ շատ կային, մանաւանդ, երբ զօրքն առաջ անցնէր:

Ձ Ե ր դ ո Օ ծ ու ր ե ա ն

Սոնարհ որդիներ՝

Յանձնաժողովի անդամներ $\left\{ \begin{array}{l} Գիւլս աբեղայ \\ Աւետիք Տէր Պօղոսեան$

1916 թ. 10 յունիսի.
ս. Էջմիածին.

Ծանօթ. Սոյն ղեկուցագրի հետ ներկայացնում ենք՝ 1) Յանձնաժողովի արժանագրութիւնների մատեանը. 2) Հաւաքած իրերի, մեռադրերի եկեղեցական սպասների մատեանը:

Յանձնաժողովը ստացել է ստորև յիշուած անձերից հետևեալ ձեռագրերը, որոնց և յայտնում է իւր շնորհակալութիւնը:

ա) Սարգիս քահ. Ստեփանեանից՝ 1) Մաշտոց, 2) Քարոզ-
գիրք, 3) Աւետարան:

բ) Իգնատիոս Տէր-Գասպարեանից՝ 1) Համառօտութիւն Բա-
բոյական Աստուածարանութեան, 2) Հայելի վարուց, 3) Գիրք
վեցօրէից, 4) Հարցմունք ս. Տաթևացւոյ, 5) Ուղ և ծուծ Աստուա-
ծարանութեան, 6) Մեկնութիւն Սիրաքայ, Բ. հատոր:

գ) Կարապետ Սասունիից և Հմայեակ Մակարեանից՝ 1) Քա-
րոզգիրք, 2) Աղբիւր բացեալ, 3) Աստուածարանութիւն Յովհ.
Դամասկացւոյ, 4) Մեկնութիւն Սաղմոսի:

դ) Վարդան Յովհաննիսեանից՝ 1) Քարոզգիրք, 2) Մեկնու-
թիւն Մատթէոսի:

ե) Պօղոս Սիմէօնեանից՝ 1) Հարանց վարք, 2) Յայսմաւուրք:

զ) Բժ. Արշակ Պօղոսեանից՝ Բժշկարան Ամիր-Դալվաթի:

է) Միհրան Տէր-Գրիգորեանից՝ Ատենական խօսք Մեծին
Ներսէսի:


ը) Թադէոս Թադէոսեանից՝ Քարոզգիրք Տաթևացւոյ:

թ) Հայ կամաւորական Բ. բանակի շտաբից՝ Շարական:

ժ) Խնուսում Գարեգին Չաւղարեանից՝ մի ճաճանչաւոր
խաչ:

Ձեռագրերը յանձնուած են մատենադարանին, խաչը՝ Մայր
Տաճարին ի պահպանութիւն:

Մուշ ուղարկուած Յանձնաժողով:



Յ Ո Ւ Յ Ա Կ

Մոփի Ս. Կարապետ վանքից բերած եւ Մայր Տաճարի
խորանում պահ տուած եկեղեցական սպասների եւ իրե-
ղենների

Թ.	Ի Ր Ե Ղ Ե Ն Ե Ր	Քանակ
1	Թագ եպիսկոպոսական ինն.	9
2	Արտախուրակ ութ զ.	8q
3	Վական տանձմէկ. 7 հատ արծաթ, 2 մարգարտ. 2 ասեղնագործ.	11
4	Սաղավարդ	1
5	Սրբիչ ժամարարի ինն. 7 հատ ասեղնագործ	9
6	Երիզներ խամ և խառ մի կապոց	1
4	Ուրախ տանձմէկ.	14
8	Հողաթափ մի զ.	1q
9	Գործուռայ տանն ինն	19
10	Փորուրար տանն չորս	14
11	Եմիփորոն ութ	8
12	Շապիկ ժամարարի ինն	9
13	» զարի տանձմէկ	11
14	Սկիհի քօղ յիսունինն	59
15	Ծածկոց գերեզմանի քսանեօթ	27
16	Վարագոյր գերեզմանի տաննհինգ	15
17	» սեղանի երկու	2
18	Շուրջառ քսանչորս	24
19	Փիլոն մինը խառ, 2 խամ. երեք	3
20	Վերարկու վանայ շալ մի	1
21	Բազպան երեք զոյգ	3q
22	Պնակէ մի հատ	1
23	Մասնատուփ չորս. մինը մեծ	4
24	Գօտի տանն հինգ, 5 հատ մարգարտով, մինը ոսկի, մի սաղաֆի, 8 արծաթ	15
25	Գաւազանի գլուխ փղոսկրեայ մի	1
26	Օրօրօց արծաթէ երեք	3
27	Մատուցարան արծաթեայ մի	1
28	Կնիք մի	1
29	Կանթեղ արծաթեայ 89, մինը ոչ արծաթ	89

30	Խաչ երկուհարիւր յիսուն երեք	253
31	Ջահ փոքր չորս, մինը արծաթ	4
32	Աղաւնի մեռօնի երեք	3
33	Մոմակալ հինգ զ. մի զ. արծաթ, մի զ. միջակ	57
34	Մասնատուի Ուխտի տապանակի կնքով,	2
	արծաթ երկու	5
35	Խնկաման արծաթի հինգ	6
36	Բաժակաման արծաթէ չորս	1
37	Տիպ նշխարի հինգ	1
38	Բուրվառ վեց	1
39	Պատուանդան խաչի արծաթ. մի	1
40	Խաչուառ արծաթ մի	15
41	Աշտանակ եօթնատեղեան մի	9
42	Պատկեր խաչելութեան, շուրջը ապակուց մի	26
43	Մաղղմայ տասն հինգ հատ	1
	Գաւազան եպիսկոպոսական արծաթէ ութ, մէ-	
44	կը հասարակ փայտից	1
45	Մասունք պղնձեայ տուփերով քսանվեց մի-	
	նը փայտէ	1
46	» արծաթեայ » մի	1
47	Արծաթեայ երկմսղկեայ տուփ սրոց, պատկեր-	
	ներով, մէջը 5 խաչեր մասունքներով մի	1
48	Արծաթեայ երկփեղկեայ տուփ, մէջը մի մասուն-	
	քով խաչ և մի խաչ առանց մասունքի մէկի	1
49	Տուփ փայտեայ արծաթազատ, երկփեղկեան,	
	մէջը մէջը չորս խաչեր մասունքներով մի	1
50	Պղնձէ կլոր տուփ 2 խաչ մասունքով 2 առանց	
	մասունք	1
51	Պղնձէ մեծ տուփ	1
52	» կլոր տուփ մէջը չորս խաչ մասունքով	1
53	Նոյնպէս	1
54	» մէծ տուփ մէջը մի հատ կոտորած դատարկ	
	պղնձէ աջ մի հատ արծաթէ չիֆթիլի դա-	
	տարկ՝ խաչ և չորս խաչ մասունքներով	1
55	Պղնձէ կլոր տուփ մէջը չորս խաչ մասունքով	1
56	» » » » երեք » »	1
57	Մասնատուի արծաթէ, մէջը անյայտ մասունք	
	երկու	2
58	Փայտէ տապանակ խաչէ, երեսը արծաթազատ,	
	մէջը դատատարկ մի	1
59	Թիթեղեայ փոքր տուփ անյայտ մասունքով մի	1
60	Արծաթեայ մանր խաչեր տասներկու	12
61	Սկիհ քսաներեք*)	23

*) Իրերը ս. Էջմիածնում կրկին անգամ մանրամասն ցուցադա-
րուել են համապատասխան անուններով ուստի յանձնաժողովի Ս. Կա-
րապետում կազմած ցուցակից տարբերումէ. ամբողջութիւնն անփոփոխ է :